

ԿՐՕՒԱԿՆԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ
(1911 թ. ԱՅԽԱՐՀԱՆՆԵՐՈՒ ՓԱՄԱՆԵՑ:

Քրանտիայում հասարակական կարծիքը վերջերս զբաղւած է այն խնդրով թէ Փարիզի 1900 թ. աշխարհահամաժողովի ժամանակ տեղի պիտի ունենայ արդեօք կրօնական համաժողով ինչպէս որ այդ եղաւ 1893 թ. Զիկագոյում:

Զիկագոյի աշխարհահամաժողովի ամենից աւելի աչքի ընկնող երևոյթներից մէկն անշուշտ այդ ժողովն էր որ ուր առաջին անգամ միմեանց հանդիպեցան մի հանդիսաւոր ու բազմամարդ ակնբուժ աշխարհիս այլ և այլ կրօնների ու դաւանութեանց ներկայացուցիչներ: Քաղաքակրթութեան պատմութիւնը մեզ ուսուցանում է կենդանի օրինակներով որ մաքի յառաջդիմութեան մարդկութեան հոգեւոր զարգացման ամենախայտուն արտայայտութիւնն է կրօնական ներողամտութեան գաղափարը որ միանգամայն պակասում է քաղաքակրթութեան ազդեցութիւնից դուրս մնացած ազգերին մինչև օրս: Բայց խնդիրն այն է որ նոյն իսկ Եւրոպայի լուսաւոր ազգերի մէջ մինչև այժմ՝ յաճախ արտայայտուում է կոյր մոլեռանդութեան այն ոգին որի դէմ դարերով մարտել են այնքան լուսամիտ ու հանձարաւոր մարդիկ և որին զոհ են դնացել պատմութեան մէջ անմահացած այնքան նահատակներ և կրօնական ներողամտութեան այդպիսի բացակայութիւն իրումք ամենից աւելի համարուում է արդասիք տգիտութեան, ազգերի փոխադարձ ճանաչողութեան պակասութեան պատուի:

Արդ՝ Քրանտիայի լուսամիտ եկեղեցականներից մէկը, երիտասարդ արքայ Էարբոնէլ (Charbonnel) առաջինը զարմեցնելով և բերք որդ կրօնական համաժողովի խնդիրը որ նա առաջարկում է գումարել 1900 թ., կամենում է իմանալ Քրանտիական հասարակութեան կարծիքն այդ մասին: Եւ Քրանտիական մամուլը ուշադրութեան աննելով այդ հարաւերը՝ տարբեր կարծիքներ է յայտնում համաժողով գումարելու հնարաւորութեան մասին: Revue Bleue* հանդիսում պ. Ա. Ռելիլը (Albert Réville) ինքն անձամբ համակրելով կրօնական համաժողովի գաղափարին, խոստովանում է միևնոյն ժամանակ որ այդ խնդիրը Քրանտիայում արձարծուում է ոչ այնքան յաջող պայմաններում և որ համաժողովի իրագործումը շատ աւելի դժուար է Քրանտիայում: քան այդ եղաւ Ամերիկայում: Նախ՝ աչքի առաջ պէտք է ունենալ որ կաթոլիկ աշխարհն այս խնդրում զիջաւորացէս կ'ուզենար իմանալ Ա. Լոն ժ. Գ. պապի կարծիքը որ սակայն լուռ է ցայտօր. և եթէ նա ոչ միայն հակառակ չէ եղել Զիկագոյի համա-

ժողովին այլ նոյն իսկ իւր հաւանութիւնն է տուել գորանից չէ կարելի հետեցնել, թէ այս պնդում էլ նա իւր հաւանութիւնը կը տայ մի այդպիսի գումարման: Երկրորդ, ինչպէս երևում է արքայ Էարբոնէլի ստացած բացասական պատասխաններէն, Քրանտիայում որ գրեթէ բացառապէս կաթոլիկ երկիր է, կրօնական համաժողովի իրագործումը կը հանդիպի երկու տեսակ արգելքի՝ «մաքառող աղատ մտածողները» (les libres penseurs militants) ծաղրի առերկայ պիտի գարծնեն համաժողովը իսկ «ուղղափառ» կաթոլիկները որիչ կրօնի գոյութիւնն անգամ չուզենալով ճանաչել՝ պիտի չկամենան, որ միասին համախմբուած լինին ամեն տեսակ կ'օն ներկայացուցիչներ՝ կաթոլիկ եկեղեցականների հետ խառն:

«Բայց մերժել կրօնական համաժողովի գաղափարը չէր նշանակիլ արդեօք խոստովանել, թէ Քրանտիան աննորոշակ է երիտասարդ Ամերիկային մրցակից հանդիսանալու աղատ գաղափարների ներողամտութեան և ամեն տեսակ կրօնական համոզմանց յարգանքով վերաբերելու նկատմամբ:— Բացառանում է R. B.- յօդուածագիրը: Մի՞թէ ուրեմն անհետեւութիւն կամ անբարշտութիւն պիտի համարենք այն բոլոր կրօնները, որ տարբերուում են մերինից.... Երբեք համաժողովը մի ուղիղ, ապահով միջոց չէ՝ որոշելու այն ընդհանուր հիմունքը որի վրայ կարող էր յառաջ գալ consensus gentium, ազգերի միարանութիւնը, մի խնդիր՝ որ արդէն հին դարերի իմաստասէրների ուշադրութիւնն էր գրաւել: Իւրաքանչիւր անհատ իւր սեպհական համոզման տէրն է, սակայն ոչ դը չի հերքել որ ազգերի ներայրութեան շունչը կարող է թարմացնել այն միտողորտը, որ ստեպ խեղդուկ է լինում շնորհիւ նախապաշարմանց: կոյր ասելութեան և դրացիների վերաբերութեամբ տգէտ լինելուն: Ահաւասիկ ինչ խորին տգիտութեան նշան, որ ցոյց է տալիս մի պերճախօս քարոզիչ իւր՝ արքայ Էարբոնէլին գրած պատասխանի մէջ. նա զայրացած է որ նոյն իսկ մի վայրկեան հնարաւոր են համարում կողք կողքի յիշել կաթոլիկ կրօնն ու կ. ու պ ա շ տ ա կ ան հ աւ ա տ ա լ է ք ն եր բ (իմն բոլոր միւս կրօնները).... Ինչ և իցէ, անեկրապիլի է որ այդ բոլոր համաժողովներից, աշխարհահամադէսներից մարդկութեան ապագայի համար մնում է մի բան՝ խաղաղական անդորրացուցիչ խօսքը կրօնների միացման մասին չէ, այլ մարդկային ընտանիքի ապագայ միութեան նախազայցման, որ հիմնուած պիտի լինի կրօնի և բարոյականութեան մի քանի մեծ սկզբունքների վրայ, որոնց գերագոյնը ընդհանուր ներայրութեան սկզբունքն է:

Որն է այն բրիտանական, որ կարող է այս մտքին հակառակ լինել:

* № 7. 15 févr., 1896.